# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

## «ԵՔ-ԾՀԱՊՁԲ-16/104» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

**Մասնակցում էին՝**
**Հանձնաժողովի նախագահ՝** Հ. Գևորգյան
**Հանձնաժողովի անդամներ՝** Ք. Վարդանյան, Ն. Ոսկանյան, Գ. Թորոսյան, Լ. Մատինյան
**Հանձնաժողովի քարտուղար՝** Մ. Ջալինյան

## 1. Հայտերի բացման մասին

**1.1. Հայտերի բացման.**

- **վայրը՝** Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ

**-օրը՝** 20 մայիսի 2016թ.

**-ժամը՝** 10:00

1.2. Ընդունել ի գիտություն, որ **«ԵՔ-ԾՀԱՊՁԲ-16/104»** ծածկագրով ընթացակարգի հրավերին էլեկտրոնային համակարգով /armeps.am/ հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1. | **ՏԷՏ ԻՆՎԵՍՏ ՍՊԸ** |
| 2. | **ԵՎԱ ԵՎ ՍՅՈՒԶԻ ՍՊԸ** |
| 3. | **Ա/Ձ ԳՈՒՐԳԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ** |
| 4. | **ԽԱՔ ՍՊԸ** |
| 5. | **ՖՈՏՈՆ ՍՊԸ** |
| 6. | **ՆՈՐՔ-7 ՍՊԸ** |
| 7. | **«ՍՊ» ՍՊԸ** |
| 8. | **ԳԱԼԻՄԱ ՍՊԸ** |

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

**1.3.** Ընդունել ի գիտություն, որ հայտերի բացման նիստում համակարգը ճանաչել է **8** էլեկտրոնային հայտ, իսկ **«Սևանի հացի գործարան» ՓԲԸ–ի և «Անանո» ՍՊԸ–ի** հայտերը համակարգի կողմից հետագա գնահատման համար համարվել են **անընդունելի**, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել վերջիններիս հայտերը:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

**1.4. Մասնակիցների կողմից ներկայացված յուրաքանչյուր բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են,** բացառությամբ

* **«Նորք–7» ՍՊԸ**–ի, որի կողմից ներկայացված էլ. հայտում բացակայում է գնի առաջարկը /Հավելված 4/: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետի դրույթը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել **«Նորք–7» ՍՊԸ**–ի էլ. հայտը:

* **«ՍՊ» ՍՊԸ**–ի հայտի գնի առաջարկում՝ Հավելված 4-ում, տեղի է ունեցել անհամապատասխանություն, այն է՝ չափաբաժինների համարները սխալ է լրացված: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետի դրույթը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել **«ՍՊ» ՍՊԸ**–ի էլ. հայտը:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

**1.5. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են սահմանված պայմաններին համապատասխան,** բացառությամբ.

* Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հրավերի պահանջներին նկատմամբ, այն է՝ մասնակիցը Հավելված 1-ում նշել է, որ իր կողմից հայտով առաջարկվող բոլոր չափաբաժիններում նշված ապրանքները հանդիսանում են ՀՀ արտադրության ապրանքներ, սակայն Ա/Ձ Գուրգեն Ստեփանյանը չի կցել Հավելված 4.2-ը:

* «Եվա և Սյուզի» ՍՊԸ–ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հրավերի պահանջներին նկատմամբ, այն է՝ մասնակիցը Հավելված 4.1–ի փոխարեն կցել է Հավելված 3.6–ը:

Գնահատող հանձնաժողովը ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետի համաձայն վերոգրյալը որակեց անհամապատասխանություն՝ ոչ գնային պայմանների մասով, համաձայն որի նիստը կասեցվեց և Մատակարարներին տրվեց 1 օր ժամանակ (մասնակցին ծանուցելու պահից հաշված) առաջարկելով այն շտկել:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | Հ. Գևորգյան |
| Անդամներ՝ | | Ք. Վարդանյան |
| | | Ն. Ոսկանյան |
| | | Գ. Թորոսյան |
| | | Լ. Մատինյան |
| Համակարգող՝ | | Մ. Զալինյան |